

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 37/4

22 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Սուսաննա Հովհաննիսյանի 19.08.2015 թ-ի դիմում-բողոքը ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 06.08.2015 թ-ի թիվ 6103848 ակտի դեմ:

#### **Ա/Ձ Սուսաննա Հովհաննիսյանի բողոքում բերված փաստարկները.**

Փոստային ծառայության միջոցով ստացվել է ՀՀ ՖՆ Սևանի տարածքային հարկային տեսչության կողմից կազմված 06.08.2015թ. թիվ 6103848 ստուգման ակտը, որով առաջադրվել է տուգանք՝ 150.000 դրամի չափով:

Ա/Ձ Սուսաննա Հովհաննիսյանը գտնում է, որ վերը նշված ստուգման ակտը անօրինական է և պետք է ճանաչվի անվավեր՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Ստուգման ակտում նշված է, որ քաղաքացի Հասմիկ Ալիխանյանի կողմից 21.07.2015թ. ժամը 14:35-ին ք.Սևան, Ս.Սևանեցի 17 հասցեում գտնվող Սուսաննա Հովհաննիսյան Ա/Ձ-ին պատկանող մանրածախ առևտրի կետից կատարվեց գնում 300 դրամի չափով՝ 1 հատ «Բաունտի» տեսակի կոնֆետ՝ 250 դրամ և 1 հատ անձեռոցիկ՝ 50 դրամ, որոնց դիմաց վճարումները կատարվեց կանխիկ դրամով: ԱՁ Սուսաննա Հովհաննիսյանի կողմից գումարը չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Ստուգում իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 14:38-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց «Z» հաշվետվությունը՝ 0 դրամ ընդհանուր գումարով: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո ժամը 14:39-ին մուտքագրվեց կատարված վճարման արժեքը՝ 300 դրամ և ժամը 14:39-ին նորից դուրս բերվեց «Z» հաշվետվությունը՝ 300 դրամ: Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ Կառավարության 26.03.2015թ. թիվ 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 17-րդ կետի 2 ենթակետի պահանջները: Համաձայն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի Ա/Ձ-ին առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով:

Այսինքն արձանագրվել է, թե իբր Հասմիկ Ալիխանյանի կողմից գնվել է ապրանք, որի համար կատարված վճարման դիմաց Ա/Ձ Սուսաննա Հովհաննիսյանի կողմից ՀԴՄ կտրոն չի տրամադրվել:

Վերը նշվածը (արձանագրվածը) բացարձակապես չի համապատասխանում իրականությանը: Ինչ վերաբերում է «Z» հաշվետվությանը, ապա այդ օրը հանձնարարագրում նշված հարկային ծառայողներն այդ գործողություններն անօրինական կարգով են կատարել և երկու անգամ «Z» հաշվետվություն են դուրս բերել: Ամբողջ իրականությունը եղել է հետևյալը.

2015 թվականի հուլիսի 21-ին ժամը 13:30-ից 14:00-ի սահմաններում մի անձանոթ աղջիկ իրոք խանութից գնում է կատարել: Սակայն գնում կատարելուց հետո ապրանքի հետ միասին նրան տրամադրվել է նաև ՀԴՄ կտրոն: Ժամը 14:30-ի սահմաններում խանութ է այցելել նաև Սևանի ՏՀՏ աշխատակից Հ.Հովհաննիսյանը, ով նույնպես խանութից գնում է կատարել: Ա/Ձ Սուսաննա Հովհաննիսյանը ապրանքի հետ միասին նրան տրամադրել է ՀԴՄ կտրոն, սակայն ապրանքը և ՀԴՄ կտրոնը վերցնելուց հետո նա ՀԴՄ կտրոնը թողել է վաճառասեղանին և դուրս եկել: Ա/Ձ Սուսաննա Հովհաննիսյանը

հասել է ՀՀ չովհաննիսյանին է հանձնել ՀԴՄ կտրոնը: Դրանից հետո ՀՀ չովհաննիսյանը կրկին մտել է խանութ և ասել է, թե ինչ-որ մեկը խանութից առևտուր է կատարել և նրան ՀԴՄ կարոն չի տրամադրվել: Նա ՀԴՄ-ից դուրս է բերել «Z» հաշվետվությունը, ինչից հետո հարցրել է, թե կարող է ստուգել դրամարկղում առկա դրամական մնացորդը: Ա/Ձ Սուսաննա Հովհաննիսյանը չի առարկել: Նա ստուգել է նաև դրամարկղում առկա դրամական միջոցները և ասել, որ «Z» հաշվետվության տվյալները և դրամարկղում առկա դրամական միջոցների գումարը համապատասխանում են: Դրանից հետո, նա կրկին ՀԴՄ-ի հետ ինչ-որ գործողություններ է կատարել, հավանաբար կրկին ՀԴՄ-ից դուրս է բերել «Z» հաշվետվություն և հեռացել է: Նրա հեռանալուց հետո խանութ են մտել Սևանի ՏՀՏ աշխատակիցներ Գ.Սարգսյանը, Հ.Ջուլիակյանը և Ն.Մուրադյանը: Նրանք ներկայացրեցրել են ստուգման հանձնարարագիրը, տեղեկացրել են, որ Ա/Ձ Սուսաննա Հովհաննիսյանը խախտում է թույլ տվել և առաջարկել են ստորագրել հանձնարարագիրը: Ա/Ձ Սուսաննա Հովհաննիսյանը հրաժարվել է հանձնարարագիրը ստորագրել, քանի որ որևէ խախտում թույլ չէր տվել: Դրանից հետո ստուգման հանձնարարագիրը և մնացած բոլոր փաստաթղթերը ուղարկվել են փոստով:

Ա/Ձ Սուսաննա Հովհաննիսյանը գտնում է, որ իր նկատմամբ արձանագրվել է մի խախտում, որն իրականում չի կատարվել: Բացի այդ, ենթադրյալ ստուգման ամբողջ գործընթացն իրականացվել և ստուգման ակտը կազմվել է ՀՀ օրենսդրության ակնառու և կոպիտ խախտումներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթը պետք է իրականացվի հնարավորինս սեղմ ժամկետում: Նույն օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի համապատասխան հրամանով սահմանվել է, որ հարկային մարմնի ղեկավարի կողմից հրապարակված հանձնարարագրով նախատեսված ստուգումը հանձնարարագրի հրապարակմանը հաջորդող 30 օրացուցային օրվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին չձանդթացնելու դեպքում նշված ժամկետին հաջորդող առաջին աշխատանքային օրը ստուգող կառուցվածքային ստորաբաժանումը զեկուցագիր է ներկայացնում հարկային մարմնի ղեկավարին ստուգման հանձնարարագիրը չեղյալ ճանաչելու (հաշվառումից հանելու) վերաբերյալ՝ նշելով ստուգման հանձնարարագիրը տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին չձանդթացնելու պատճառները: Մինչդեռ սույն գործով թիվ 6103848 ստուգման հանձնարարագիրը հրապարակվել է 2015 թ-ի հունիսի 9-ին, այնինչ այն ձանդթացման է ներկայացվել 2015 թ-ի հուլիսի 21-ին, այսինքն՝ ավելի քան մեկ ու կես ամիս հետո: Հենց միայն այս փաստը բավական է, որ ստուգման ակտը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ուժով ճանաչվի անվավեր:

Ստուգման ակտը կազմելիս խախտվել են նաև «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի պահանջները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 55-րդ, 56-րդ, 57-րդ հոդվածների պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով Ա/Ձ Սուսաննա Հովհաննիսյանը խնդրում է ՀՀ ՖՆ Սևանի տարածքային հարկային տեսչության 06.08.2015թ. թիվ 6103848 ստուգման ակտը չեղյալ համարել:



**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ պետի 09.06.2015 թ-ի թիվ 6103848 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Սուսաննա Հովհաննիսյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 06.08.2015 թ-ի թիվ 6103848 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ քաղաքացի Հասմիկ Ալիխանյանի կողմից 21.07.2015 թ-ին ժամը 14:35-ին ք.Սևան, Ս.Սևանեցի 17 հասցեում գտնվող Ա/Ձ Սուսաննա Հովհաննիսյանին պատկանող մանրածախ առևտրի կետից կատարվել է գնում 300 դրամի չափով՝ 1 հատ «Բաունտի» տեսակի կոնֆետ՝ 250 դրամ և 1 հատ անձեռոցիկ՝ 50 դրամ, որոնց դիմաց վճարումները կատարվել է կանխիկ դրամով: Ա/Ձ Սուսաննա Հովհաննիսյանի կողմից գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ստուգում իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև, ժամը 14:38-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվությունը՝ 0 դրամ ընդհանուր գումարով: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո ժամը 14:39-ին մուտքագրվել է կատարված վճարման արժեքը՝ 300 դրամը և ժամը 14:39-ին նորից դուրս է բերվել «Z» հաշվետվություն՝ գումարով 300 դրամ: Ստուգմամբ պարզվել է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները: Համաձայն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի առաջադրվել է տուգանք 150.000 դրամի չափով:

Սույն գործին առնչվող նյութերի և ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ Ակտը կազմվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ հետևյալ պատճառաբանությամբ.

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Ստուգման ժամկետը չպետք է գերազանցի ստուգում իրականացնելու մասին համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետը: Անհրաժեշտության դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ՝ համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանով կամ հանձնարարագրով, սույն հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 անընդմեջ աշխատանքային օր, իսկ ստուգվող ժամանակաշրջանի որևէ ֆինանսական տարվա արդյունքով 3,0 մլրդ դրամ և ավելի իրացման շրջանառության կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ մինչև 75 անընդմեջ աշխատանքային օր:»:

Քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ պետի 09.06.2015 թ-ի թիվ 6103848 հանձնարարագրով ստուգման ժամկետը սահմանվել է մինչև 10 անընդմեջ աշխատանքային օր: Սակայն, Ակտի վրա կատարված գրառումների համաձայն ստուգումը կատարվել է 08.07.2015 թ-ից մինչև 27.07.2015 թ-ն ընկած ժամանակահատվածում: Ընդ որում, առկա չէ որևէ ապացույց՝ հրաման կամ հանձնարարագիր, ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ պետի 09.06.2015 թ-ի թիվ 6103848 հանձնարարագրով սահմանված ստուգման ժամկետը երկարաձգված լինելու



վերաբերյալ: Այսինքն, ստուգման ժամկետը տևել է ոչ թե վերոգրյալ հանձնարարագրով սահմանված 10 անընդմեջ աշխատանքային օր, այլ՝ 10 աշխատանքային օրից ավելի:

Վերոգրյալից հետևում է, որ քննարկվող դեպքում Ակտը կազմվել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտմամբ:

Հարկ է նշել նաև, որ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Սույն օրենքով նախատեսված հսկողության իրականացման նպատակով հարկային մարմինը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան իրականացնում է ստուգումներ և ուսումնասիրություններ, ընդ որում՝ ստուգումներ անցկացնելու հանձնարարագրի վավերապայմանների, դրանք ստուգվող սուբյեկտին ներկայացնելու պահանջների նկատմամբ կիրառվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հավելվածի դրույթները»:

Վերոգրյալից հետևում է, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման ընթացքում գնումն այլ անձի միջոցով (անձի գրավոր համաձայնությամբ) իրականացնելու դեպքում հանձնարարագրում նշվում են նաև այդ անձի տվյալները (ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրային տվյալները, իրավաբանական անձի դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը, անվանումը, գտնվելու վայրը):

Քննարկվող դեպքում Ակտի 1-ին կետում հիշատակված ապրանքների գնումն իրականացվել է քաղաքացի Հասմիկ Ալիխանյանի կողմից, սակայն նրա վերաբերյալ տվյալները ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ պետի 09.06.2015 թ-ի թիվ 6103848 հանձնարարագրում նշված չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթներով, որի համաձայն անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, Հանձնաժողովը եզրակացնում է, որ դիմում-բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 06.08.2015 թ-ի թիվ 6103848 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ